

դէպի Աստուծոյ արքայութիւնը՝ Նա ինքն
ասումէ՝ վերստին այն ինչ որ ի սկզբանէ
հաստատուել էր՝ սակայն և յիշումէ՝ այն
աւարքնութիւնն, որ իրագործում են նորա-
ւորոնց տուեալ է և որո՞ք և «են ներքինի»
որ զանձինս իսրեանց արարին ներքինին մո-
տին արքայութեան երկնից՝ և Այստեղից
արդէն ճշգրտման ու զրիգոր ճաթեացու
որոշած երեք նպատակները՝ մէկ՝ «առ ի
խորշելոյ ի պառնկութենէ» երկրորդ՝ որպէս
ծնութեան համար, և երրորդ՝ ցանկութիւնը
գտնելու և ամօքելու համար:

Եւ զիտելով այդ երեք կէտերը, կտես-
նենք որ թէ որպէս ծնութիւնն և թէ միւս
երկու նպատակները միջոց են ապիւյ մար-
դուն Աստուծոյ արքայութեան համար գոր-
ծելու և այդ իրականացնելու: Որչափ հաս-
կանանք տղամարդի և կնոջ կենակցութեան
նշանակութիւնն, այնքան սուրբ կալահներ
սիրոյ յարաբերութիւնն, որպէս զի օր ըստ
օրէ կարողանանք մեր աստուածապիւր կոչ-
ման ծառայելու: Մարդու կոչումն է՝ կամ
ամուսնական կենակցութեամբ և կամ ան-
համախորութեամբ՝ միջոց գտնել առաւել յա-
ջողութեամբ Աստուծոյ արքայութեան հա-
մար գործելու:

Այդ նպատակով նա է միայն դիմում ա-
մուսնական կենակցութեան, ով որ զգումէ
միայնակ գործելու թուլութիւն և անյարմա-
րութիւն և կարօտումէ ամուսնական օգնա-
կանութեան կամ գործակցութեան: Միայն
թէ սուրբ է նպատակը, որքանութեամբ էլ
պէտքէ ձգտել դէպի այն և սուրբ պաշել
այն ընթացքն, որ տանում է դէպի այդ նը-
պատակը: Որչափ մեղանչէ մարդ այդ կենա-
ցութեան մէջ՝ չկատարելով բրիտանէական
ամենապարզ առաքինութիւններն, որպէս
սէր, ներողամտութիւն, պարկեշտութիւն,
հիգութիւն, հաւասարութիւն և լն, այնքան

1. Մատթ. ԺԹ. 11, 12, Տեա. և ԼԹ. Է. 8—9.

2. Բայց ամուսնացն և սրբացն ասում. լու է նոցա
թէ կայցեն իբրեւ զիս: Ապա թէ ոչ ունիցին ԺոյԺ,
ամուսնացին, զի լու է ամուսնանալ քան զժենունալ:

մեղանչում է նա յիշեալ բարձրագոյն նպա-
տակի դէմ՝ և ինքն ինքեան դատապարտում:
Աստուած միայնումէ երկուսին և մի մար-
մին գործնում՝ միասին էլ պէտքէ գործեն
և ասպեն, և ինչպէս «Քրիստոս սիրեաց զե-
կեղեցին և զանձն իւր մատնեաց վասն նո-
րա» այնպէս էլ աղամարդը պէտքէ սիրէ
իւր կնոջ կատարեալ անձնազոհութեամբ, զի
«որ սիրէ զին իւր՝ զանձն իւր սիրէ» իսկ
իւր անձն առողն առաջին մեղապարտն է
Աստուծոյ առաջ իբրեւ Աստուծոյ շնորհն ար-
համարհող: Նոյն յարաբերութիւնը պէտքէ
պահէ և կինը: Երկուսն էլ իրար ուղղող են
և բժշկող: Մի խօսքով՝ տղամարդի և կնոջ
յարաբերութեան կատարելատիպը պէտքէ
լինի Քրիստոսի և իւր եկեղեցու յարաբե-
րութիւնն, որպէս զի կարենան վայելիլ Հա-
յոց եկեղեցու օրհնութեան շնորհները:

Ա. ՏԵՐ. ՄԻՔԵԼԵԱՆ.

(Կը շարունակուի).

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԵԼԵ ՇՊԵԼԻ ԲԵՂԳԻՆՈՐ ԻՆՆԵԼՈՒ ՀՈՄԵՐ.

ԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ.

Ամեն կողմից ամենաբժանաւոր մար-
դիկ աշխատասեր, արդարասէր և խիստ
ազնիւ մարդիկ են՝ նոքա արժանի են ընդհա-
նուր յարգանքի: Այսպիսի մարդիկներին չէ
կարելի չը հաւատաչէ կարելի չարել չէ կա-
րելի չցանկալ նոցա նման դառնալ: Նոքա
են պահպանում ամեն լու և բարի բան
աշխարհում և եթէ նոքա չլինէին, ապրել
ևս չարժէր:

Ո՛չ որ պարտաւոր չէ հարուստ խելացի

կամ՝ զիտնական լինելու բայց աղնիւ մարդ լինել պարտաւոր է իւրաքանչիւրը: Լաւ տնային կեանք ունենալու համար անշուշտ պէտք է ունենալ բարի սիրտ առողջ խելք, համբերութիւն և արդարամտութիւն: Բարութիւնը կերպով իմն անբաժան է խելքի հետ, — առ կենսականի միաւորութիւնն է հոգեկանի հետ: Խելքի և բարութեան միութիւնը շատ բանի մէջ է երևում: Մենք շատ անգամ տեսնում ենք, որ խելքը մարդուն բարի է դարձնում և բարութիւնը շատ անգամ փոխարինում է խելքը:

Բնաւորութիւնը կազմում է զանազան, մինչև անգամ ամենամանր, հանգամանքների ազդեցութիւնից:

Սր չէ անցնում որ մարդս չտոկոթ երեւիցէ լաւ կամ վատ բան, բայց իւր մէջ լաւ բնաւորութիւն մշակելն առանց աշխատութեան և ջանքերի՝ ոչ ոք չէ կարող: Կատ անգամ կը սրտառահին դժուարութիւններ և փորձութիւններ, որոնց դէմ կարեւոր է անշուշտ մաքառել նոցա յաղթելու համար: Բայց հոգով հզօր և աղնիւ մարդը պիտի չյուսահատէ, այլ հաստատապէս պիտի յուսայ յաջողութեան վրայ:

Ուսեւել բարի և աղնիւ դառնալու նոյն իսկ ցանկութիւնն ոգեւորում է և հզօրացնում է մկր և մենք լաւագոյն ենք դառնում ամեն անգամ, երբ աղնիւ ջանք ենք անում ցանկալի նպատակին հասնելու:

ԸՆՏԱՆԻՔԻ, ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՐԻՆԱԿԻ
ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆ.

Բնտանիքն առաջին և ամենապիտաւոր գրգռոցն է, որտեղ կազմակերպւում է մարդու բնաւորութիւնը: Բնտանիքի մէջ է ստանում մարդն իւր առաջին բարոյական կրթութիւնը: Մորա միջից է քաղում իւր ամբողջ կեանքի համար վարուելու կանոնները, ահա թէ ինչի մի լաւ մայրը արժէ հարկւրաւոր դպրոցական ուսուցիչներ:

Ամենադքատ բնակարանը եթէ նորա կարգադրողը բարի, հոգատար, ուրախ և մաքրա-

սէր կին է, կարող է դառնալ քաղցր և խաղաղ, բարեբաղդութեամբ լի անկիւն: Սա թանկագին կզառնայ մարդու համար անցեալի յիշատակութիւններով, սրտի համար ապաստան կզառնայ կեանքի փոթորիկներից և աղմուկներից հանգիստ առնելու, խաղաղ օթեան կլինի աշխատութիւնից յետոյ, մխիթարութիւն կլինի անբաղդութեան մէջ, և ուրախութիւն ամեն ժամանակ: Այսպէսով խաղաղ բնտանեկան շրջանը լաւագոյն դպրոց է ոչ միայն երիտասարդ, այլ և հասուն հասկում:

Կասկած չկայ, որ բնականութիւնը տրուած է նոյնպէս կանանց, ինչպէս տղամարդիկներին նորա համար, որ նոքա օգուտ քաղեն նորանից և գործադրեն նորան և ոչ թէ նորա համար, որ նա ըթանայ անգործադրութիւնից:

Կնոջ խելքը և բնաւորութիւնը մշակուած պիտի լինին նոյնքան իր սեփական, որքան և ուրիշների բաղդաւորութեան համար: Մոյն իսկ տղամարդիկ ոչ առողջ դատողութիւն, ոչ բարի բարք կունենան, եթէ կանայք հակառակն ունին:

Բնտանեկան կեանքից նուազ ազդեցութիւն չունին մարդու բնաւորութեան վրայ՝ ընկերակցութիւնը և օրինակները: Ուստի պէտք է աշխատել բարեկամութիւն կապել բարի և աղնիւ մարդիկների հետ, նոցանից միայն բարի բան սովորելու համար:

Անուակ մարդիկների հետ ընկերակցութիւնն ապականուած ծաշակի և արատաւոր ձգտմունքի նշան է: Մոցա ընկերութիւն յաճախելն անկասկած բնաւորութեան խանգարման կհասցնէ: Ուստի բարեմիտ և բարեխիղճ երիտասարդները միշտ լաւ և աղնիւ մարդիկների ընկերութիւն պիտի որոնեն և նոցա նմանել պիտի աշխատեն:

Անդհանրապէս նոյն իսկ մեզանից աւելի խելացի և աւելի փորձառու մարդիկների ընկերութիւնը մեր վրայ միշտ լաւ ազդեցութիւն ունի: Մոցա միջոցով մենք աւելի մօտ ենք ծանօթանում կեանքի հետ: Մենք օգուտ ենք քաղում նոցա փորձառութիւնից և հը-

րահանգում ենք, ծանօթանալով ոչ միայն ինչ որ նոցա կեանքի բաղաւորութիւն և ուրախութիւնն էր, այլ և նոցա կրած տանջանքի հետ: Ահա թէ ինչի խելացի և եռանդուն մարդիկներն հետ բարեկամութիւնն և ընկերակցութիւնը չեն կարող մեծ ազդեցութիւն չունենալ մեր բնաւորութեան վրայ: Այսպիսի բարեկամութիւնն ամրացնում է մեզ մեր բարի դիտաւորութիւնների մէջ և սովորեցնում է մեզ օգտաւէտ կեանք վարել թէ մեզ և թէ ուրիշների համար:

Մարդու բնաւորութիւնն յայտնում է կեանքի ամեն հանգամանքներում: Արհեստաւոր դասի մէջ անգամ լաւ բնաւորութեան տէր մարդը կարող է լաւ ուղղութիւն տալ իւր ընկերակիցներին և բարոյապէս բարձրացնել նոցա:

Այսպէս Ֆրանկլինը, Լօնդօնում արհեստաւոր լինելով իր արթուն և ազնիւ կեանքի օրինակով ամբողջ ընկերութեան բարքն ուղղեց: Պոքր առ փոքր նորա ընկերները դադարեցին տօն օրերը վատնելով և արբելով անցուցանել սկսեցին դրամ ժողովել սե օրի համար մաքուր և չպատռած հագուստ ունենալ, կիրակի օրերն եկեղեցի գնալ, լաւ և օգտաւէտ գրքեր կարդալ, իրանց զաւակների կրթութեան և իրանց ընտանիքի պէտքերն հոգալ մի խօսքով սկսեցին թէ զործարանում և թէ տանը արթուն և ազնիւ կեանք վարել:

Իւրաքանչիւր մարդու ամենօրեայ կեանքը ուրիշների համար օգտաւէտ կամ վնասակար օրինակներ է ներկայացնում: Որինաւոր մարդու կեանքն առաքինութեան ամենալաւ դաս է և արատների ամենախիստ յանդիմանութիւն:

Պօկտօր Հուկեր իւր ծանօթ բարեպաշտ մի քահանայի կեանքը կենդանի քարոզ է աշունհում որը կարող է ամենարատաւոր մարդիկներին անգամ համոզել թէ առաքինութիւնը զեղեցիկ է:

Բարի Հէրբերտ իւր հովուական պարտքերը կատարել սկսելիս ասաց. ամենից աւելի

ես ցանկանում եմ համոզուած լինել որ ինքս ազնիւ և լաւ կեանք եմ վարում: Աստուծո խօսքին համաձայն որովհետեւ քահանայի բարեգործ կեանքը ամենալաւ միջոց է ժողովրդի մէջ սէր և յարգանք յարուցանելու դէպի քահանան, նոյն իսկ նորան նմանելու ցանկութիւն: Եւ ես սորան կհասնեմ օգնութեամբ Տեառն, յարակցեց նա որովհետեւ այն դարն որի մէջ ապրում ենք, առաւելապէս լաւ օրինակների մեծ պէտք և կարիք ունի քան թէ խրատների:

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ. ԲԱՋՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՆԲ. ՆԱԶՍՊՈՒՄ.

Աշխատիր իբրեւ թէ յաւիտեան պիտի ապրես, Աղօթիր իբրեւ թէ այսօր և եթ պիտի մեռնես:

Առանց աշխատութեան ոչինչ չէ կարելի ձեռք բերել: Ինչ որ լաւ և վնեմ բան կայ մարդու մէջ, աշխատութեամբ է ստացւում: Այլ թէ աշխատութիւնը այլ պարտաւորութիւնն է կործանում մարդուն: Ծուլութիւնն այնպէս է մաշում սիրտը, ինչպէս որ ժանդը ուտում է երկաթը: Ծուլութիւնը միակերպ ստորացնում է թէ անհատներին և թէ ամբողջ ազգեր, ծոյլ մարդիկն երբեք ոչինչ լաւ բան չեն արած և երբեք ոչինչ անելու չեն: Ծոյլները միշտ անյաջողութիւններին էին հանդիպում և միշտ պիտի հանդիպեն. նոքա երբեք առաջագէմ զործ չեն կատարած: Ծոյլները վնասակար, անօգուտ, միշտ դանդատող, ձանձրացող և անբաղդ մարդիկ են: Նոքա ոչ երբեք և ոչնչով զոհ չեն լինում, երբեք առողջ չեն լինում ոչ մարմնով, ոչ հոգով:

Ծուլութիւնն ամեն չարիքի աղբիւր է, ամենարատների մայր է, եթ մահացու մեղքերից մին է: Ո՛րքան մարդիկ զող և աւազակ են դարձել միայն նորանից, որ ծուլանում էին իրանց հացը աշխատութեամբ հայթայթելու: Քրիստոնէութեան առաջին առաքեալները ցոյց տուին մեզ աշխատութեան օրինակ: Պօղոս առաքեալը պարծենում էր նորանով որ աշխատում էր իւր ձեռներով և երբեք ոչ ոքին ծանրութիւն չէ եղել: Բօնիֆացիոս

գնաց Մնղիս քրիստոնէական կրօնը քարոզելու մի ձեռնին աւետարան և միւս ձեռնին հիւսնի զօրծիքներ ունենալով: Մնղիայից նա վերջը Գերմանիա գնաց, որտեղ ժողովրդին կառուցանելու արհեստ սովորեցրեց:

Անդադար և միևնոյն ժամանակ օգտաւէտ պարապմունքի սովորութիւնը անհրաժեշտ պայման է թէ տղամարդիկներին և թէ կանանց համար և լուսադոյն միջոց է ձանձրոյթ չզգալու: Այն մարդու համար, որը սովորած է բոլոր կեանքը օգտաւէտ պարապմունքով անցուցանել, իւրաքանչիւր բոլորէն նշանակութիւն ունի և երբ ազատ ժամանակ պատահէ նորանից օգուտ է քաղում վայելութեամբ:

Ֆաջութեան յուսով աշխատել, օգտաւէտ զբաղմունք գտնել—ահա այս է բարդաւոր լինելու լուսադոյն միջոցներից մին:

Մարդու քաջութիւնն այն ժամանակ է երևում երբ լեւեալն ստիպում է իրան համբերութեամբ տանելու ամենայն չարչարանքներ պարտքի և խղճմանքի համար: „Ես աւելի յօժարութեամբ կհամաձայնեմ փնտսուելու արդարութիւնն յայտնելով ասում էր մի յայտնի անգլիացի, քան թէ իմանամ որ արդարութիւնը կփնտսուի իմ լուսութիւնից“:

Ճշմարիտ քաջութիւնը չէ արդելում մարդուն բարի լինելու: Ընդհակառակն մենք յաճախ տեսնում ենք, որ բոլորովին քաջ մարդիկ շատ մեղմ և հեղ բնաւորութիւն ունին: Որինակ Նէպիրը, որը Մնղիայի պատերազմի միջոցին Ռսպանիայի դէմ քաջութեան հրաշքներ արեց, երբէք որտէ՛ր գնում: Ուրովհետեւ անբան կենդանին իզուր սպանելու միտքն անգամ անտանելի էր նորա համար: Յետոյ լիւտերը, կրօնի համար մահն յանձն առնելու ամենասատիկ չարարանքներ կրելու պատրաստ մարդը սիրում էր բնակներին, ծաղիկներ և երաժշտութիւն: Սորա ետևողը և քաջութիւնը չէին արդելում նորան կնոջ պէս բարի, քնքոյշ սիրա ունենալու:

Քաջ և արի տղամարդը վեհանքն է և ամեն դէպքում ազնուարար է ներգործում: Սա

օգուտ չի քաղի մինչև անգամ իւր թշնամու նեղ դրութիւնից, չի յարձակուի այն մարդու վրայ, որը պաշտպանուելու այժ չունի: Վեհանքնութեան այսպիսի օրինակները պատահում են պատերազմի միջոցին ևս: Որինակ, Ռեօտտինգէնի մօտ եղած ճակատամարտում Ֆրանսական հեծելազուններ յարձակուեցաւ անգլիական զօրքի վրա: Հեծելազնիքի զլուխ կանգնած Ֆրանսական երիտասարդ սպան կամենում էր ընկնել անգլիական զօրապետի վրայ, բայց երբ նկատեց, որ նա միայն մի ձեռք ունէր, որով բռնած էր իւր ձիու սանձը, Ֆրանսացին քաղաքավարութեամբ յարգանք մատոյց նորան իւր թրով և առաջ գնաց:

Ահա դարձեալ Ֆրանսական բանորի դէբօրինակ արիութեան և անձնուիրութեան մի դէպք: Այս դէպքը Պարիզում պատահեց: Շատ բարձր, բայց դեռ բոլորովին չվերջացած տան շուրջը փայտամածներ կային, որտեղ աշխատում էին բանորներ: Փայտամածներն ամուր չէին և յանկարծ քանդուեցան և նոցա վրայ գտնուող բոլոր մարդիկ թափուեցան բարձրից զեռին՝ բացի երկուսից—մի պատանի և մի միջին տարիքով մարդ: Մըքա երկուքեան բռնած էին ներսի տախտակի դուռս ընկած փոքրիկ ծայրից, որն արդէն ծալուում էր կախ ընկածների ծանրութիւնից և մօտ էր կոտորուելուն: Պետրոս, գոչեց աւելի հասակաւորն, բաց թող տախտակը մի բռնիր, միտքդ բեր, որ ես հայր եմ բնտանիք ունիմ: Այս ճշմարիտ է, պատասխանեց Պետրոսը, և բաց թողեց տախտակը ընկաւ սաղայտակի վրայ և մեռաւ, բայց փրկեց բնտանիքի հօրը:

Անկասկածելի է, որ մարդս կարող է իրան վարժեցնել երկիւղի զգացմունքին չենթարկուելու, ինչպէս որ կարող է սովորել ուշադիր աշխատասէր, բարի և ուրախ լինել:

Այնույնք տղամարդիկներից պակաս արիութիւն և եռանդ չունին, թէպէտ նոցա աւելի քիչ են պատահում այս յատկութիւնները ցոյց տալու դէպքերը: Այս դր կանանց պէս համբերութեամբ և արիութեամբ չէ տանում

տրտմութիւնը և հիւանդութիւնը: Փորձով ապացուցուած է, որ նոքա ընդունակ են դիմանալու] ամենածանր փորձութիւններին և թշուառութիւններին բոլորովին նոյն արիութեամբ: Ինչպէս և տղամարդիկը, և մենք շատ ենք տեսնում այնպիսի կանանց, որոնք տանում են ամենադժուար հիւանդութիւններ առանց որեւիցէ դանդառների և տրտունջի:

Կանայքն առաւելապէս ցոյց են տալիս իրանց արիութիւնը և անսահման հաւատարմութիւնը դէպի պարտքը գթութեան և բարերարութեան գործերում: Ամենքին յայտնի է թէ ինչ աներկիւղ համարձակութեամբ գթութեան քոյրերը գինուորների վերքեր են կապում նոյն իսկ պատերազմի դաշտում թըշնամիների գնդակների կարկուտների տակ: Շատ անգամ նոքա վերքեր են ստացել իրանց մարդասիրական պարտքեր կատարելիս: Ո՞վ չէ բաժնի Լօնդօնում տիկին Կարպէնտէրի և տ. Պարա Պարտէնի—բանտերի այս եռանդատ և անպաստակ այցելուների և վերանորոգիչների անունները:

Սարա Մարտէնը որբ էր մնացել մանկութիւնից և կրթւում էր իւր մեծ մօր մօտ: Մայր շատ բարի էր և բարեպաշտ և մի նպատակ միայն ունէր—ըստ կարելոյն թշուառներին օգնել: Գրեւ ևս օրիորդ լինելով նա յաճախ մտածում էր յանցաւորների, բանտարկուածների տխուր դրութեան մասին: Այս անբաղձները, մեղքերին և անառակութեան մատնուածներին, ամենքից արհամարհուած և ձգուած, նորա խորին ցաւակցութիւնն էին շարժում և նա վերջը վճռեց բոլոր իւր կեանքը նոցա սովորեցնելուն և ուղղելուն նուիրել: Բանտն այցելելու թոյլտուութիւն ձեռք բերելով նա սկսեց ամեն օր քանի մի ժամ բանտարկուածների հետ անցուցանել կարգում էր նոցա՝ Աւետարանը, սովորեցնում էր նոցա կարգալ և զրել իսկ կանանց բացի սորանից սովորեցնում էր գործել, կարել և ձեւել: Բանտում պատրաստած իրերի վաճառումից զոյացած դրամով նա գնում էր նոր նիւթեր՝ արհեստներ սովորեցնել շա-

բունակելու համար: Տղամարդիկներին նա սովորեցնում էր յարդեայ գլխարկներ հիւսել, պրական և մանկական գլխարկներ կարել, մինչև անգամ կարկատել, մի խօսքով աշխատում էր նոցա մի բանով զբաղեցնել, որ նոքա պարագ չմնային իրանց մտքերին անձնատուր չլինէին: Այսպէս նա բանար մի տեսակ փեթակ դարձրեց, որտեղ ամենքը մեղքների պէս աշխատում էին: Մոր մտած կալանաւորներն երբեմն ընդգիմանում էին նորան: Սակայն իւր անփոփոխ հեղութեամբ նա կարողանում էր իրան յարգել տալ նոցա և ուրիշների հետ աշխատեցնել:

Յանցանքների մէջ յամառած ծեր մարդիկ, Լօնդօնի ծարալի գողեր, ապականուած տղաներ, անառակ ծովապարներ, վատարարոյ կանայք, մի խօսքով այն բազմազոյն բազմութիւնը, որը սովորաբար մեծ քաղաքի բանտերն է լցնում, ենթարկւում էր այս բարի կնոջ բարեգործ ազդեցութեանը: Մորա հրեկողութեամբ բանտարկուածներից շատերն իրանց կեանքում առաջին անգամ էին տեսնում գրիչը ձեռքին կամ սովորում այբուբեն արժանագին այբբենարանով: Սարան ձեռք բերեց նոցա վտառհութիւնը հսկում էր նոցա, ազօթում էր և լալիս էր նոցա հետ համակրելով նոցանից իւրաքանչիւրին: Մա զարթեցնում էր նոցա մէջ բարի գիտաւորութիւններ, քաջալերում էր յուսահատածներին, ամենքին ուղղուելու ծանապարհն էր ցոյց տալիս և օգնում էր նոցա նոր ծանապարհի վրա: Բանտարկուածների բանտից դուրս գալուց յետոյ ևս նա չէր դադարում նոցա մասին հոգալուց: Մոցա աշխատած դրամներից նա փոքր դրամազուլիս կաղմեց, որը գործ էր դնում ազատուածներին գործ գտնելու, այսպէս օգնելով նոցա ազնուաբար նոր կեանք սկսելու:

Քաջութեան ուրիշ տեսակն ևս կայ, որը նոյնչափ անհրաժեշտ կարեւոր է կեանքում, այն է ինքնազսպումն կամ սեփական անձին իշխելն:

Այն մարդը որը չգիտէ իւր ցանկութիւններին գիմադրել, իւր կիրքերի սարուկ է դառնում:

Բարոյապետ ազատ լինելու համար անբան կենդանուց բարձր կանգնելու համար մարդս ոյժ պիտի ունենայ իւր ցանկութիւններն և հակմունքի դէմ պատերազմելու: Եթէ նոքա կարող են ֆնասել իրան կամ ուրիշներին, իսկ այսպիսի ոյժը ձեռք է բերուած միայն ինքնազգայման անդադար վարժութեամբ: Այս ոյժի մէջ է ահա մարդու գլխաւոր գերազանցութիւնը կենդանուց:

Այսպէս օրինակ հանրի Մարտին քարոզչի: Երբ յայտնի է իւր հեղութեամբ և համբերութեամբ մանկութեան ժամանակ անհամբեր վայրացիտ և չար էր: Սակայն իւր վատ հակմունքի դէմ շարունակ մաքառելով, նա կարողացաւ վերջապէս յաղթել նոցա և դառնալ այն ինչ որ խիստ ցանկանում էր լինել այն է բարի և համբերող մարդ:

Պ Ը Ր Տ Բ.

Պարտքը լցնում է մարդու ամբողջ կեանքը: Մի սկսում է բնտանիքի մէջ: Այր և կին պարտք ունին միմեանց սիրելու և յարգելու, բաժանելով իրանց մէջ ուրախութիւններ, վշտեր և հոգսեր և օգնելով միմեանց ամեն բանի մէջ: Մանուկները պարտք ունին սիրելու, պատուելու և լսելու իրանց ծնողներին և մտածելու որ ժամանակով իրանք պիտի դառնան նոցա միւրիմարութիւն և նեցուկ, իսկ ծնողներն իրանց կողմից պարտք ունին անգաղար հոգալու: Երբ զաւակներին զարգացնեն լաւ, ազնիւ և բաղդաւոր մարդիկ դառնալու, իրանց և ուրիշներին օգտաւէտ լինելու:

Որքա համար կարեւոր է մանուկների հակմունք զիտել և ամեն կերպով աշխատել նոցա արասներն արմատախիլ անել ամենափոքր մանկութիւնից: Իսկ գլխաւորապէս ծնողների պարտքն է ոչնչացնել մանուկների մէջ հեռեւալ արասներն, որոնք միւս արասներից աւելին արգելում մարդիկներին բաղդաւոր և օգտաւէտ լինելու: Նախ — նախանձ: Միտանձոտ մարդն երբեք և ոչինչ հանգամանքներում չէ կարող բաղդաւոր լինել, միւսներն էլ հարուստ է թէ աղքատ, խեղացի է

թէ յիմար, գեղեցիկ է թէ ագեղ, որովհետեւ չկայ այնպիսի մարդ, որը չհանգիպէր իւր կեանքի մէջ իրանից աւելի հարուստ, խեղացի կամ գեղեցիկ մարդուն:

Իւր զրութիւնն անգաղար համեմատել այն մարդիկների զրութեան հետ, որոնք մեզանից աւելի բաղդաւոր կամ հարուստ են — սա հաստատ միջոց է երբեք և ոչնչից գոհ չլինելու: Բայց եթէ մենք յաճախազայն համեմատենք մեր զրութիւնը մեզանից աւելի չունեւոր և անբաղդ մարդիկների զրութեան հետ, կտեսնենք, որ մեզ մնում է միայն գոհանալ Աստուծուց և օգուտ քաղելն իմանալ նորանից, ինչ որ տուել է: Մի մեզ և ոչ թէ նախանձել նոցա, որոնց Աստուած աւելի է տուել: Արժէ միայն մտածել որ լինում են այնպիսի սարսափելի հիւանդութիւններ և տկարութիւններ, որոնց միջոցում ոչինչ հարստութիւն չէ կարող ուրախացնել, պէտք է յիշել կոյրերին, համբերին, կաղերին, սապատողներին, որ հասկանանք թէ որքան բաղդաւորութիւն է քաջ առողջութիւն և լաւ տեսողութիւն ունենալ: Մի որը դադարում է հաւանել իւր սեփական տունը և պարտէզը այն պատճառով միայն որ դրացին առաւել լաւ տուն և առաւել մեծ պարտէզ ունի — նա երբեք չէ կարող բաղդաւոր լինել:

Երկրորդ արատն եսականութիւնն է: Այն մարդը որ սովորել է մանկութիւնից մտածել միայն իւր մասին և թէ ինքն միայն լաւ լինել, չէ հասկանում որ իրան զրկում է լաւագոյն վայելչութիւնից կեանքի մէջ, այսինքն այն վայելչութիւնից, որ ստանում է մարդս ուրիշներին հաճելի լինելուց:

Եւստէր մարդուն ոչ որ չէ սիրում և նորա բոլոր շրջապատողները նոյնպէս սկսում են սակաւ հոգալ նորա մասին, ինչպէս նա ինքն սակաւ է հոգում ուրիշների մասին: Մինչդեռ բարի մարդուն որն աշխատում է ըստ հարաւորութեան ամենին հաճելի բան անելու, իւրաքանչիւրը սիրում է և իւրաքանչիւրն իւր կողմից ուրախ է նորան մի ծառայութիւն տնելու:

Երրորդ արտար ծուլութիւնն է: Չանձրոյ-
թը մեր կեանքի անտանելի տանջանքներից մին
է: Սա մի տեսակ հիւսնոգութիւն է: Բայց ով
է ամենքից աւելի ձանձրանում: Ո հարկէ, ծոյլ
մարդիկ: Ծուլութիւնից ծոյլ մարդու զուխն
այնպիսի վատ և տխուր մարքեր են դալիս, որ
ոնք աշխատող մարդն երազում ևս չէ տես-
նում: Այս դեռ քիչ է: Ծոյլ մարդը պարա-
պութիւնից շատ անդամ՝ արեցութեան և
ուրիշ արտաներին է անձնատուր լինում և սո-
րանից երբեմն կատարելագէտ փնտւում է և
աղքատանում: մինչդեռ կարող էր վայելուչ և
անկարօտ կերպով ապրել եթէ միայն կամե-
նար իւր ծուլութեան յաղթել և զործ սկը-
սել: Աշխատանքի մարդու զիտակցութիւնը թէ
նա ի դուր չէ ապրում՝ աշխարհումս իրան և
ուրիշներին օգուտ տալով շատ է նպաստում
նորա բողբալութեանը:

Անկասկած հաստիպոր մարդն ևս կարող
է թողնել այս արատները: Եթէ նա հաստատ
կվճէ՝ ուղղուել բայց մանուկի համար այս
անհամեմատ տեսիլ հեշտ է: Ահա թէ ինչի
ծնողների սրտզան պարտքն է իրանց զուտի-
ներին լաւ կանոնաւոր կրթութիւն տալ:

Բացի ընտանեկան պարտքերից մարդը պար-
ձեալ պարտքեր ունի հասարակութեան վե-
րաբերմամբ: Խրտաւել թէ աղքատ և թէ
հարուստ մարդու պարտքն է աշխատել որքան
կարելի է հասարակութեան օգտուէտ անդամ
լինելու: Ով ընկերներին օգուտ տալու մի-
ջոցները շատ են: Որինակ՝ շահաւետ արհեստ
օտարեցները բարի խորհուրդ տալ հարկաւոր
միջոցում անգրագէտին կարգալ և զրել սո-
վորեցնել և այլն: Զայանի Սըն Պիէր կրօնա-
ւորը մարդկութեան յաւիտենական երախտա-
գիտութեան արժանացաւ նորանով, որ առա-
ջինն տուեց արհեստական գպրոցներ բանալու
միտքն աղքատ մանուկների համար, որտեղ
նոքա ոչ միայն կարգալ և զրել են սովորում
հապա և զանազան արհեստներ, որոնց միջո-
ցով հասան աւանդուց յետոյ, հնար ունին
ազնուարար իրանց ապրուստը հայթայթե-
լու:

Այս կերպով պարտքը լցնում է բոլոր մեր
կեանքը, կեանքի մէջ մեւտ զործելու բուգէից
սկսած մինչև մահը. պարտքը առաջինների
վերաբերմամբ, պարտքը կրտսերների վերա-
բերմամբ, պարտքը հաւասարների վերաբեր-
մամբ, առհասարակ մարդու պարտքը զէպի
մարդ և զէպի Աստուած: Աստուած մեր վրայ
պարտք է դրել օգուտ քաղելու այն ամենից,
ինչ որ Սա մեզ տուել է թէ մեր սեփական
և թէ մեր ընկերների բողբալութեան հա-
մար: Պարտաճանաչութիւնը մի ոյժ է, որը
քաջ մարդուն ևս քաջալերում է: Պարտա-
ճանաչութիւնն որու վեհութիւն է, մեծաց-
նում: Երբ Պոմպոնի բարեկամներն սկսեցին
համոզել նորան հռոմից չգնալ փոխորկի մի-
ջոցին, իւր կեանքը վտանգին չնկմարկելու
համար, նա վեհանձնութեամբ պատասխանեց
թէ՝ „Գնալը նորա պարտքն է, իսկ ապրելը նո-
րա պարտք չէ“: Եւ նա կատարեց այն ինչ
որ իւր պարտքն էր համարում ուշք չգարձ-
նելով վտանգին, փոխորկին արհամարհելով:

Պարտքի այսպիսի վեհմ դաղափարն անդ-
լիացի յայտնի Ալէքինգսոն զօրավարի բնա-
ւորոյթի գլխաւոր յատկութիւնն էր: Աւտեր-
լոյի ճակատամարտի մէջ նա իւր զինուորնե-
րին ապաց, „Հաստատ կացէք, զինուորներ, յի-
շեցէք թէ ինչ կասն մեր մասին Անգլիայում“:
Զինուորները նորան պատասխանեցին. „Հան-
գիստ եղէք, տէր, մենք մեր պարտքը գի-
տենք“:

Անգլիացի Սէլսոն ծովապետը նոյնպէս քաջ
գիտէր իւր պարտքը: Սորա ապացոյցը նորա
խօսքերն են, որով նա դարձաւ նաւատորմի-
ղին Տրաբալարի ճակատամարտից առաջ.
“Անգլիան մեր իւրաքանչիւրից իւր պարտք
կատարելն է սպասում“, նոյնպէս և նորա
վերջին խօսքերը մահից առաջ. „Ես իմ պարտ-
քըս կատարեցի և սորա համար զօհանում
եմ՝ Աստուծուց“: Այսպիսի խորին պարտա-
ճանաչութիւնը թէ մասնաւոր մարդու և թէ
ամբողջ ժողովրդի կողմից մեծ զործ է:

Այն ազգը, որի մէջ պարտաճանաչութիւ-
նը մեծ է, ոչինչ ժամանակաւոր աղէտների

միջոցում չպիտի յուսահատի իւր անպաղայի մասին: Բայց վայ այն արդինս որի մէջ պարտաճանաչութիւնն ոչնչացել է. նա մեռ է կորստիւն:

Բ Ա Ր Ք.

Արդէն ասացինք, որ կեանքի մէջ յաջողութեան գլխաւոր պայմաններից մին հեղաբարդութիւնն է:

Սարգու բաղաւորութիւնը կախումն ունի զլիաւորացէս իւր համբերութիւնից, առկուծութիւնից, բարութիւնից, ողու հարթ տրամադրութիւնից և ընկերների բաղաւորութեան մասին ունեցած հոգատարութիւնից: Պզտոնի խօսքերը թէ ուրիշների բաղաւորութեան մասին աշխատելով մեր սեփական բաղաւորութիւնն ենք պատրաստում բոլորովին ճշմարիտ են:

Կան այնպիսի բաղաւոր բնաւորութիւններ, որոնք միշտ և ամեն բանում կարողանում են լաւ կողմ գտնել: Չկայ այնպիսի մի չարիք, որից նոքա միտիւարական և հանգստացնող միտք դուրս չբերէին: Չկայ այնպիսի մի մեղք ամպ, որի միջից նոքա համար գտնէ մի թոյլ արեղակնային ծառագայթ չբփայլէր: Այսպիսի բաղաւոր բնաւորոյթով օժտուած մարդիկն արդարեւ արժանի են նըմանողներ ունենալու: Մոցա հոգին լցուած է կարծես արեգակի լոյսով և այս լոյսը սփռւում է նոցա ամբողջ շրջապատի վրայ: Եթէ նոցա ևս վիճակուած է լինում խաչը կրել, նոքա կրում են նորան անտրտունջ, առանց անձկութեան, առանց վաճառելու իրանց ոյժերն անօգուտ արտասուքներով և զանգատներով արիւրար առաջնն գնում փշերի միջով: Հարեանցի քաղելով իրանց ճանապարհին պատահած ծաղիկները:

Թեպէտ որդու ուրախ տրամադրութիւնը մեծ մասամբ բնածին է, լինումն այնուամենայնիւ կարելի է նորան ձեռք բերել և կրթել մարդու մէջ, ինչպէս ամենայն սովորութիւն: Կեանքը մենք կարող ենք ամենալաւ կամ ամենալատ կերպով զործադրել: Կեանքը միշտ

երկու կողմ ունի և մեզանից է կախուած լաւ թէ վատ կողմին նայել: Չէ կարելի բաղդին սգանել անգործ նստած: Հարկաւոր է նորա բնգառաջ գնար աշխատութեամբ նորան ձեռք բերել: Ամենալայն բնոյթներ լինում են սովորաբար ամենաբարի, սիրող, հաւատացող, հաստատուն յոյս և ակնկալութիւն տալիս:

Ողու զուարթ և ուրախ տրամադրութիւնն ոչ միայն ուրախութիւնների հարուստ աղբիւր է, այլև միևնոյն ժամանակ հզօր նեցուկ է բնաւորոյթի համար: Մի շատ բարեպաշտ մատենագիրից հարցրին թէ ինչպէս է յաղթում նա փորձառութիւններին, նա պատասխանեց. „հոգու ուրախ տրամադրութեամբ“: Ուրախ բարքը գերազանց և շատ օգտուէտ յատկութիւն է ամենօրեայ կեանքի համար: Մի ոմն այսպիսի տրամադրութիւնն „հոգու պայծառ եղանակ“ անուանեց: Արդարեւ զուարթութիւնը հանգստութիւն է փոխարինում, զուարթութիւնը մի տեսակ մըշտընդենական երգ է առանց բառերի: Զուարթութիւնը մարդուն ոյժ և սիրտ է տալիս, մինչդեռ արտասուքներ և անձկութիւն վատակարեկ են անում և թուլացնում են նորան:

Մէրը, յոյսը և համբերութիւնը — ահա զուարթութեան իսկական աղբիւրներ:

Մէրը մարդուն զիջող և բարեմիտ կարծիք է ներշնչում մերձաւորների մասին: Մէրը կարեկից է, բարի է և հաստատուն: Մէրը միշտ աշխատում է տեսնել մարդիկների և կեանքի միայն լաւագոյն կողմը: Այս հաստատում է մարդուն բարի մտադրութիւնների մէջ և իւր լուրջ ուրախութիւնն և բաղաւորութիւնն է սփռում: Մէրը և բարութիւնը ոսկու քաշով չեն ձեռք բերում: սակայն իրրեւ շնորհի և ուրախութեան աղբիւր անգնահատելի են:

Մոյն իսկ մեզանից է կախուած նայել կեանքի պայծառ կամ մեղք կողմին: Շատ դէպքերում իւրաքանչիւրիս համար կեանքն այն է, ինչ որ մենք ինքներս նորան կգործենք:

Պուարթ և ուրախ մարդիկն աշխարհիս իս-
կանան տիրողներ են որովհետեւ աշխարհը նո-
ցա է պատկանում ով գիտէ նորան վայելելը
ԽՈՐԷՆ Ծ. Վ. ՍՏԵՓԱՆԷ.
(Շարունակելի):

Խ Ո Ր Դ Ի Դ Ե Ր Ը.

(Քաղաքացի. Բեռլին ամսագրի № 11 93 թ.)



Ե՛հ և բարձր հոգին արհամարհում է
ամեն ինչ՝ որպէս-զի ամեն բան ընդ-
գրկէ:

Մարդավարութեան օրէնք է, որ իւրաքան-
չիւր մարդ՝ առանց չափելու նրա զարգացման
աստիճանը՝ իրաւունք ունի իր մտածմունք-
ները և դատողութիւնները հաղորդել հասար-
ակութեան՝ մարդ-եղբայրներին և հասարա-
կութիւնը բարեհաճ և համբերատար ուշադ-
րութեամբ լսում է իր անդամին, օգտւում է
նրա խելօք մտքերից, իսկ անհիմն խօսքերը
թողնում է առանց ուշադրութեան: Այդտեղ
ազատաբար խիղճը կատարում է իր դերը, վա-
սըն դի տիրող վեհ և բարձր հոգին չի խրտ-
չում մանր մունր բաներից և թող է տալիս
ամեն մտքի պարզաբար արտայայտւելու. խիղ-
ճը և միտքը ամենամօտ առնչութիւն սունին
իրար հետ:

Իսկ մեր մէջ որպէս մի խիստ տգէտ հա-
սարակութեան մէջ՝ բռնաբարւում է միտքը
բռնաբարւում է խղճի ձայնը կուսակցական շա-
հերի համար: Եւ ահա երբ երևում է մի վեհ
հոգի՝ մի մեծ մարդ, որով այնքան աղքատ է
մեր կեանքը, մի բարձր հոգի՝ կրկնում են որ
ընդունակ է իր կեանքի մի մասը մեզ ներշն-
չել հասարակութիւնը անխտիր կերպով պար-
տաւոր է, մեզ թւում է, պատկառելի ուշադ-
րութիւն նուիրել նրան, ջանալով թափան-
ցել նրա մեծ հոգին և իւրացնել նրա վե-
հութիւնը, լայնարձակ համբերութիւնը և
հշտ ընկերական բարեհաճութիւնը:

Ով կուզէ լինի մեծ մարդը՝ նա ժողովրդա-

կան նուիրական սեպհականութիւնն է, հասար-
ակութիւնը պատասխանատու է նրա համար
պատմութեան առաջ: Միան պատճառաւ միշ-
տն ու ցաւը կը ծանրանայ և սե բծի պէս
կը դրոշմուի մեր խղճի վերայ: Արող էք չը-
հնազանդել մեծ խօսքին, եթէ ձեր խելքը և
խիղճն այդ արգելում են, բայց նախ և առաջ
լաւ քննեցէք և համոզուեցէք՝ չը լինի թէ ան-
խելքութիւնը և անխղճութիւնն են թելադր-
ում այդ ձեզ:

Իմացէք, որ մեծ հոգու տէր՝ քանքար ու-
նեցող մարդու համար դէթ ճանարտութեան
կէսը մատչելի է, իսկ հասարակ մահաւանդու-
ների համար մատչելի չէ նրա և ոչ իսկ հա-
րիւրերորդ մասը, բացի դրանից՝ նա ունի
ահաղին խելք, նա միշտ տալիս է իւր սեպ-
հականը և տալիս է անկեղծաբար, և զրանք
են իսկական հանձարի նշանները: Ինչ միտք
էլ որ նա չը յայտնէ՝ մեզ միշտ նոր է թը-
ւում թէպէտ շատ մտածողներ նոյնը ասած
լինին, բայց բան այն է, որ հանձարն ինքն է
անմիջապէս տեսել նկատել մտքերը և գաղա-
փարները մեր համար անտեսանելի աշխարհ-
ներում և ինքն է կեանք տուել այդ մտքերին
և գաղափարներին: Եւ յիշաւի, մեծ հոգիների
կոչումն է ոչ թէ ստեղծել նոր մտքեր, այլ
յարութիւն տալ այն մտքերին, որոնց խեղ-
տել մոռացութեան է տուել ամբոխը: Մի
սկանաւոր մատենագիր տաւ է՝ թէ գեղեցկու-
թիւնն է ամենամեծ մարդասիրութիւնը, յի-
շաւի, գեղեցկութեան միջոցով է, որ հեշտու-
թեամբ մարդիկ կարողանում են տեսնել ճշ-
մարտութիւնը, իսկ ամենամիտքի մասով ճշ-
մարտութեան վերահասու լինելն է աղբիւր
սիրոյ և բարութեան:

Սակայն բացի գեղազիտական շնորհքից և
նշանաւոր խելքից՝ կայ զարձեւով մի մեծ գոր-
ծօն պարագայ՝ այն է խիղճը: Խղճի գերը
հրաշալի է, ստեղծագործական հանձարի վրայ
այնքան ճառելով, չը պիտի անուշադիր թող-
նել և խղճի կատարած դերը, զարգացած,
զգայուն խիղճը այնքան պօրաւոր և հզօր է՝
ինչքան և հանձարը: